ՀՏԴ՝ 929:75(479.25)Սուրենյանց+070(479.25)
DOI: 10.54503/2579-2830-2024.1(11)-154

ՎԱՐԴԳԵՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԸ ԵՎ «ՄՇԱԿ»-Ը[1]

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՔԱՄԱԼՅԱՆ[*]

Հղման համար. Քամալյան, Մարգարիտա: «Վարդգես Սուրենյանցը և «Մշակ»-ը»: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2024): 154-168. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-154

Հեղինակը քննության է առնում հայ անվանի նկարիչ, տեսաբան, թարգմանիչ և մանկավարժ Վարդգես Սուրենյանցի՝ «Մշակ» թերթում լույս տեսած հոդվածները: Դրանցում Վ. Սուրենյանցը պնդում է հայկական ճարտարապետության մեջ ազգային տարրի ինքնատիպության մասին, կոչ է անում Բաքվի հայկական եկեղեցու կառուցման մեջ ազգայինի պրոֆեսիոնալ կիրառմանը, բնորոշում է Էջմիածնի Մայր տաճարի ռեստավրացիայի հիմնական սկզբունքները:

Հետազոտությունը հատուկ ուշադրություն է դարձնում նաև Վ. Սուրենյանցի գործունեությունը լուսաբանող հրապարակումներին: Դրանց մեջ առանձնանում է 1901 թվականին հրատարակված եզակի հոդվածը՝ նվիրված նկարչի կյանքի ընթացքում կայացած միակ անհատական ցուցահանդեսին:

Վ. Սուրենյանցի տեսական և քննադատական ակնարկները՝ «Մշակ»-ի էջերում, ազգօգուտ էին և արդիական՝ առաջատար եվրոպական մտքին համաքայլ: Տեղեկատվական կարևոր արժեք են ներկայացնում «Մշակ»-ի լրագիրների՝ Վ. Սուրենյանցի կյանքին և ստեղծագործությանը նվիրված հոդվածները:

Նշանակալից էր «Մշակ»-ի դերը հայ ազգի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում: Այն անհրաժեշտ հարթակ էր տրամադրում մեր ուսյալ հայրենակիցներին՝ հայ արվեստին առնչվող արդի հիմնախնդիրները բարձրաձայնելու, լուծումներ առաջարկելու, ազգայինը արվեստում հասկանալու և այլ արդիական մտքերի, գաղափարների ու տեղեկատվության փոխանակման համար:

Բանալի բառեր՝ Վարդգես Սուրենյանց, «Մշակ» թերթ, ազգային ինքնատիպություն, Սուրբ Էջմիածնի Մայր տաճար, ռեստավրացիոն սկզբունքներ, գեղարվեստական քննադատություն, անհատական ցուցահանդես:

Ներածություն

Հայ մեծանուն նկարիչ Վարդգես Սուրենյանցը (1860-1921) ծնվել է Ախալցխայում: Կրթությունը ստացել է Մոսկվայի Գեղանկարչության, քանդակագործության և ճարտարապետության ուսումնարանում և Մյունխենի գեղարվեստի ակադեմիայում: Արվեստագետի տաղանդը դրսևորվել է գեղանկարչության, գրաֆիկայի և բեմանկարչության, ինչպես նաև ճարտարապետության և քանդակագործության ասպարեզներում: Նա նաև մանկավարժ էր, թարգմանիչ[2], տեսաբան և

---

[1] Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21T-6E077 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

[*] ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի գիտքարտուղար, արվեստագիտության թեկնածու, margaritakamalyan@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ 10.01.2024, գրախոսելու օրը՝ 10.04.2024, տպագրության ընդունելու օրը՝ 03.06.2024:

[2] Վ. Սուրենյանցը դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում նկարչություն և «Քրիստոնեական արվեստի պատմություն» առարկաները: Անվանի հայորդին Շեքսպիրի, Հայնեի, Գյոթեի և այլոց երկերի շնորհալի թարգմանություններ է արել:

գեղարվեստական քննադատ:

Վ. Սուրենյանցի հոդվածները և բաց նամակները տպագրվել են պարբերական մամուլում՝ Թիֆլիսում լույս տեսնող «Մշակ» գրական և քաղաքական շաբաթաթերթում, «Արձագանք» գրական և քաղաքական լրագրում, «Վտակ» գրական-բանասիրական ժողովածուում, «Սովետական արվեստ» երևանյան ամսագրում և այլն [43, էջ 56-59]:

Սույն ուսումնասիրության նպատակն է՝ քննության առնել «Մշակ»-ի էջերում Վ. Սուրենյանցի կյանքին և ստեղծագործությանը նվիրված, ինչպես նաև արվեստագետի հեղինակությամբ գրված հոդվածները:

Վ. Սուրենյանցի կյանքը և ստեղծագործությունը «Մշակ»-ի էջերում

Մամուլի էջերում Վ. Սուրենյանցի մասին մեզ հայտնի առաջին հիշատակությանը հանդիպում ենք «Մշակ»-ի 1879 թվականի 70-րդ համարում[3]: «Տաղանդաւոր երիտասարդ նկարիչ» Վ. Սուրենյանցը հիշատակվում է որպես «Հյուսիսափայլ»-ի խմբագիր, լուսավորիչ-մանկավարժ և մեծ մտավորական Ստեփանոս Նազարյանի մեծադիր դիմանկարի և գիպսե դիմակի հեղինակ [17, էջ 2]:

«Մշակ»-ի էջերում արվեստագետի մասին հաջորդ հիշատակությունը 1890 թվականի N 24-ում էր: Վաղարշապատի թղթակիցը տեղեկացնում էր, որ Եվրոպայում, գլխավորապես՝ Մյունխենում կրթված, Պարսկաստանում ճանապարհորդած և արևելյան արվեստը տեղում ուսումնասիրած նկարիչ Վ. Սուրենյանցը հրավիրվել էր Էջմիածին՝ նկարչություն և «Քրիստոնէական գեղարուեստի պատմութիւնը» դասավանդելու նպատակով [30, էջ 2]:

1899 թվականի «Մշակ»-ի 88-րդ համարում Ալեքսանդր Ծատուրյանն ընթերցողներին ծանոթացնում էր Պուշկինի ծննդյան հարյուրամյակի կապակցությամբ առաջիկայում լույս տեսնելիք հրատարակությունների մասին [19, էջ 1-2]: Այլոց թվում, հոդվածագիրն առանձին ուշադրության է արժանացնում Պուշկինի «Բախչիսարայի շատրվանը» պոեմի ճոխ հրատարակությունը, որում Վ. Սուրենյանցի գրչին պատկանող «մանր ու խոշոր պատկերների, զանազան զարդանկարների ընդհանուր թիւը հասնում է 76-ի»: Վերջիններս, ինչպես տեղեկացնում է Ալ. Ծատուրյանը, «հանդէս դրված կը լինեն ռուս գրասէրների ընկերութեան նախաձեռնութեամբ կազմած Պուշկինեան ցուցահանդիսում» [19, էջ 2]:

Առավել հետաքրքրական է «Մշակ»-ի 1901 թվականի N 93-ում հրատարակված, Վ. Սուրենյանցի կյանքի օրոք կայացած միակ անհատական ցուցահանդեսի մասին տեղեկացնող բացառիկ հոդվածը: Հեղինակը Գևորգ Բաշինջաղյանի եղբայրն է՝ Սարգիս Բաշինջաղյանը [10, էջ 2][4]: Նա հայտնում է 1901 թվականի

[3] Շնորհակալություն ենք հայտնում արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանին՝ սույն հոդվածը նախապատրաստելիս մեզ աջակցելու համար: Մասնավորապես, նրա շնորհիվ գտանք վերոնշյալ հոդվածի տվյալները [17, էջ 2]:

[4] Այդ ցուցահանդեսի մասին սեփական տպավորություններով նկարիչը կիսվել է Ալ. Ծատուրյանին գրված անտիպ նամակում [41]: Շնորհակալություն ենք հայտնում ՀԱՊ Հուշաձեռագրային բաժնի արխիվավար Հռիփսիմե Դայանին՝ անհրաժեշտ նյութերը մեզ

ապրիլի 19-ին Բաքվի Հասարակական ժողովարանի դահլիճներից մեկում ցուցադրված մոտ քառասուն պատկերների մասին: Հատկապես արժեքավոր է նկարչի՝ «1896 թական» խորագրով ամենամեծ անհայտ կտավի բաշինջաղյանական բնութագիրը: Դրա համեմատությունը Վ. Սուրենյանցի մեկ այլ՝ «Հառաչանք առ երկինս» կորսյալ կտավի նկարագրության հետ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արարատ Աղասյանին թույլ է տվել առաջ քաշել նոր վարկած առ այն, որ երկու դեպքում էլ «խոսքը միևնույն, թեպետև տարբեր վերնագրեր կրող ստեղծագործության մասին է»[5]:

Վ. Սուրենյանցի հոդվածները «Մշակի»-ի էջերում

«Մշակ»-ի էջերում լույս են տեսել Վ. Սուրենյանցի հեղինակությամբ երեք հոդվածներ: Առաջինը՝ *1899 թվականի N 200-ում «Մշակ»-ի* խմբագրությանն ուղղված Վ. Սուրենյանցի բաց նամակն էր: Այն գրված էր նույն թվականի N 187-ում տպագրված «Մի հետաքրքրական հարց» խորագրով հոդվածին ի պատասխան [39, էջ 2-3]: Բաքվում հայկական եկեղեցու նախագծի ընտրության նպատակով ծխականներից և մասնագետ ճարտարապետներից հանձնաժողով էր կազմվել: Այն պետք է Պետերբուրգի ճարտարապետների կողմից մրցանակների արժանացած երեք նախագծերից ընտրեր հայկական ճարտարապետական ոճին առավել համապատասխանող տարբերակը: Վ. Սուրենյանցը ողջունում է այդ նախաձեռնությունը և դրա հիմքում ընկած մրցակցային սկզբունքը: Ռուսական միջավայրում երկար տարիներ ապրած վարպետը զգուշացնում է, որ այնտեղ հայ ազգային ճարտարապետությունը չունի «այն խիստ ու անաչառ ուսումնասիրութեան բնաւորութիւնը, որպիսին մենք պատահում ենք օտար, եւրոպական գեղարուեստագէտների աշխատասիրութիւնների մէջ (Շնաազէ... Տեսսիէ, Դիւբուա, Բուրէ և այլն և այլն)» [39, էջ 2]: Վ. Սուրենյանցը, մասնավորապես, քննադատում է Մոսկվայի «յայտնի ճարտարապետ պ. Բիկօվսկու» կառուցած մատուռը՝ համարելով այն հայկական ու վրացական ոճերի «աններդաշնակ խառնուրդ»: Հայկական ոճի «ամենայատկանիշ կողմերից» զուրկ է համարում նա նաև Նոր Նախիջևանի հանգստարանի եկեղեցու շինությունը[6]:

Անվանի արվեստագետը հանձնաժողովին հորդորում է հայկական ազգային ոճով եկեղեցի կառուցելու ցանկությունն ուղեկցել հայկական ճարտարապետության պատմության խորքային ուսումնասիրությամբ: Նա կարևորում է նաև դեպի առարկան մեծ սիրո և տաղանդի առկայությունը: Հոդվածագիրն իր «խորին համակրանքն» է հայտնում պ. Քաջազնունի և Մարգարեան ճարտարա-

---

սիրահոժար տրամադրելու համար:

[5] Ի դեպ, «Արձագանք» թերթի 1897 թվականի N 16-ում ներկայացված «Հառաչանք առ երկինս» կտավի վերոնշյալ նկարագրությունը գիտական շրջանառության մեջ է դրել հենց Ա. Աղասյանը [4, էջ 247]: Այս մասին տե՛ս նաև արվեստաբանի զեկուցումը [5, էջ 77-83]:

[6] Այս հոդվածում Վ. Սուրենյանցն իր համակրանքն է հայտնում Էջմիածնի Մայր տաճարի վերաշինության վերաբերյալ ճարտարապետ պ. Շտերնի նախագծին: Սակայն, տարիներ անց՝ նույն «Մշակ»-ի էջերում, նա քննադատում է այս նախագծերը [38, էջ 3]:

պետներին, «որոնք իրանց լուսավոր միջամտութեամբ զգուշացրել են ծխականներին՝ վաղաժամ վճիռ կայացնելուց» [39, էջ 3]:

Նշենք, որ Վ. Սուրենյանցի երազած՝ հայկական ազգային տարրերի գիտակ և շնորհալի կիրառմամբ ստեղծված ճարտարապետությունը իրականություն դարձավ տարիներ անց՝ 1920-ականներին՝ Թորոս Թորամանյանի և Ալեքսանդր Թամանյանի ակտիվ և բեղուն համագործակցության շնորհիվ:

«Մշակ»-ի էջերում Վ. Սուրենյանցի՝ «Գեղարուեստի նորագոյն հոսանքները եւ հայկական ճարտարապետութիւնը» խորագրով *երկրորդ հոդվածը 1903 թվականի N 176-ում էր* [36, էջ 1-2]: Այն պատասխան էր N 143-ում լույս տեսած «Գեղարուեստը հայերի մէջ» հոդվածի, որի հեղինակն էր Կ. Պոլսի Գեղարվեստի բարձրագույն վարժարանի և Հռոմի Գեղարվեստի ակադեմիայի շրջանավարտ Արշակ Ֆեթվաճյանը: Վերջինս առաջ էր քաշում այն միտքը, թե հայկական ճարտարապետության ոճը երկվոր է, իսկ հայերը՝ ուղղակի կրկնօրինակողներ [46, էջ 1-2]: 1903 թվականի հուլիսի 15-ին Ալ. Ծատուրյանին ուղղված իր նամակում Վ. Սուրենյանցը գրում է. «նորա (*Ֆեթվաճյանի - Մ.Ք.*)... այդպես շտապով կարդացած վճիռը այնպիսի ծանր տպավորություն թողեց վրաս, որ ես չհամբերեցի եւ նույն «Մշակ»-ին մի այլ հոդված գրեցի ի պատշպանություն հայկական գեղարվեստի» [42; 25, էջ 65]:

Հոդվածի ներածությունում հեղինակը բացահայտում է իր շարժառիթը: Ա. Ֆեթվաճյանն «այնպիսի մռայլ և անմխիթար լոյս է ձգում մեր ազգային գեղարուեստի վրա, որ ընթերցող հայ-հասարակութիւնը կարող է անտարակոյս իր դէպի մեր արուեստը ունեցած շատ փոքր յարգանքի մնացորդն էլ կորցնել», ինչն անարդարացի է՝ սահմանափակված «մի հարևանցի հայեացքով» [36, էջ 1]:

Ընդվզելով հայրենի արվեստի մակերեսային արժևորման դեմ՝ նա պաշտպանում է հայկական եկեղեցական ճարտարապետության ազգային լինելու տեսակետը: Հոդվածագրի հավաստմամբ՝ հայոց ճարտարապետությունն ազգային են ճանաչել բազմաթիվ հռչակավոր պատմիչներ, որոնք այն ավելի երկար են ուսումնասիրել [36, էջ 1]: Ապա Վ. Սուրենյանցն անդրադառնում է կրկնօրինակության խնդրին: Գեղարվեստական փոխառությունները նա համարում է բնական երևույթ, սեփականի ստեղծմանը բերող կարևոր ազդակ, փուլ ու բերում բազում օրինակներ: «Վերջապէս պիտի մխիթարվենք, որ գեղարուեստը ամեն աշխարհում եկուոր է և ազգային է դառնում միմիայն այն ժամանակ, երբ նա մի որոշ ազգի իր որոշ բնաւորութեան և միմիայն նրան յատուկ աշխարհայեցողութեան ներքոյ ստանում է այդ ազգի բնորոշ առանձնայատկութիւնները», - եզրակացնում է Վ. Սուրենյանցը [36, էջ 1]:

Այսպես, հայ ճարտարապետության մեջ հայկական ազգային առանձնահատկությունների ներքո բյուզանդական ոճը փոխակերպվել է այն աստիճանի, որ այն դարձել է «թերևս աւելի հայ, քան հայն է»: «Դժւար է մտածել մի ոճ այդ աստիճան համապատասխանող հայի բնութեանը և նրա բնակած երկրի աշխարհագրական դիրքին», - եզրակացնում է բարձրագույն ուսումնական հաստատություններում ճարտարապետություն լրջորեն ուսումնասիրած հոդվածագիրը [36, էջ 2]: Միևնույն ժամանակ Վ. Սուրենյանցը հիշեցնում է, որ բյուզանդական

ոճն ինքնին միատարր չէր և ենթակա էր փոխազդեցությունների:

Վ. Սուրենյանցն ընդդիմանում է նաև հայ արվեստի թերարժևորման դեմ: Գիտնականը բարձր է գնահատում հայկական ոճի «ազնիւ միամտութիւն»-ը, «ժողովրդականութիւն»-ը և «արխայիք ուղղութիւն»-ը, որը «այժմ ներկայ գեղարուեստական նոր հոսանքների մէջ նա պիտի ամենապատկառելի տեղերից մէկը բռնէր», եթե ճիշտ գնահատվեր: «Բարբարոսական գեղարուեստը նա է, որ անմիջապէս մարդուս սրտիցն է բղխում և, չը նայելով իր միամիտ միջոցներին... երեխայի անմեղութեամբ մատնում է իր սրտի իսկական զգացմունքները... նա միանգամայն ժողովրդական է և մատչելի... Էլ գեղարուեստը չէ մի արտաքին զարդ, չէ շռայլութիւն...» [42; 25, էջ 65]: Պատմելով արվեստի զիգզագաձև զարգացման մասին՝ Վ. Սուրենյանը կարևորում է այն փուլերը, որոնցում ծաղկում էր «գիտակցական թուաբանութիւն»-ից զուրկ այս արվեստը:

Հայ քանդակագործության զարգացման թերությունների մասին Ա. Ֆեթվաճյանի դիտարկումը Վ. Սուրենյանցը պատճառաբանում է զարգացման անանպաստ պայմաններով, նյութի պակասությամբ և ազգի բնավորությամբ՝ միաժամանակ հիշեցնելով, որ «հելլենացու պէս զօրեղ, հզօր գեղարուեստական մի ազգ... նկարչութիւն գրեթէ ամենևին չէ ունեցել» [42; 25, էջ 65]:

Նվիրյալ ազգասերն իր հոդվածն ավարտում է հետևյալ տողերով. «մեր նախնիքը... համեստաբար ըսել են՝ «Թէև մի փոքրիկ ազգ ենք, թուով շատ նուազ, զորութեամբ տկար, սակայն մեր աշխարհում ևս կատարվել են պատմութեան մէջ յիշատակվելու արժանի քաջութեան շատ գործեր» [42; 25, էջ 65]:

Հայ ազգային ճարտարապետության ինքնատիպության մասին Վ. Սուրենյանցի՝ հրապարակայնորեն բարձրաձայնած լուսավորական թեզերը ճշմարիտ են: Առջևում էին հոդվածի հրատարակման ժամանակ՝ 1903 թվականին, Հայաստան տեղափոխված, հայկական ճարտարապետության ուսումնասիրությունը պրոֆեսիոնալ հիմքերի վրա դրած առաջամարտիկ Թորոս Թորամանյանի կողմից երևան բերած՝ հայոց ճարտարապետության ազգային ինքնատիպությունը հավաստող հարուստ վկայությունները՝ նոր հուշարձանների պեղումները, չափագրությունները, վերակազմությունները, գրագետ և բանիմաց տեսական հիմնավորումները[7]: Դրանք հիմք ծառայեցին ավստրիացի անվանի գիտնական Յոզեֆ Ստրժիգովսկու՝ 1918-ին հրատարակած «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» գերմաներեն երկհատոր շրջադարձիկ ուսումնասիրության համար և միջազգային լայն ճանաչում ստացան [57][8]:

Ա. Ֆեթվաճյանը փոխեց իր կարծիքը: 6-13-րդ դարերի հայկական ճարտա-

[7] Հայկական ճարտարապետության մասին Թ. Թորամանյանի ուսումնասիրություններից տե՛ս նրա հոդվածը «Անահիտ» հանդեսում [14], ինչպես նաև նրա աշխատությունների ակադեմիական ժողովածուները [12; 13]: Հայ ճարտարապետության ուսումնասիրության մեջ Թ. Թորամանյանի ներդրումի մասին տե՛ս ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Վարազատ Հարությունյանի և պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանի հոդվածները [22, էջ 61-77; 26, էջ 15-24]:

[8] ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ջանքերով տպագրվեցին ավստրիացի գիտնականի ուսումնասիրության առաջին հատորի երկու գրքերը՝ ռուսերեն լեզվով [52; 53]:

ռապետական հուշարձանների և դրանց զարդաքանդակների գեղարվեստորեն արտահայտիչ իր մատիտանկարները և ջրաներկ պատկերները 1920-ականներից սկսած նկարիչը ներկայացրեց աշխարհին՝ որպես «վիմեղէն վկայաբանութիւն՝ հայի հանճարին հազար ամերով հին ու բարձր եւ դեռ ապրող ու բարբառող արժէքին» (Ա. Ֆեթվաճյան) [49, էջ 488][9]: Այդ ցուցահանդեսներին անդրադարձան և հայկական ճարտարապետության ինքնատիպությունը բարձր գնահատեցին եվրոպացի գիտնականներ Շարլ Դիլը, Վիլիամ Լեթաբին և այլք[10]: Հայկական ճարտարապետական հանճարի մասին Ա. Ֆեթվաճյանը վկայեց նաև խոսքով: 1920-ականներին նա ԱՄՆ-ի մի շարք քաղաքներում իր ստեղծագործությունների լուսանկարների ցուցադրությամբ ներկայացրեց «Հայ հազարամեա ճարտարապետական գեղարուեստի շուրջ», «Հայ արուեստը եւ ճարտարապետութիւնը» և այլ բանախոսություններ[11]:

«Մշակ»-ում Վ. Սուրենյանցի երրորդ հոդվածը հրապարակվել էր *1909 թվականի 88-րդ համարում* և նվիրված էր Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման հիմնախնդրին [38, էջ 3-4][12]:

1908 թվականին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի հրավիրած ճարտարապետներից և նկարիչներից Թիֆլիսում կազմվել էր հանձնախումբ, որը ստանձնել էր Սբ. Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման լավագույն նախագծի ընտրության

---

[9] Փարիզում (1920), Լոնդոնում (1921), Չիկագոյում (1923) և Նյու-Յորքում (1922) կայացած անհատական պատկերահանդեսներում ցուցադրված այս գործերը կարևոր դեր խաղացին հայոց ճարտարապետության միջազգայնացման գործում [32, էջ 92-94, 96-97]: Անիի և հարակից շրջանների դեռ մեծապես կանգուն ճարտարապետական հուշարձանների շուրջ երեք տասնյակ ջրաներկ պատկերները և Հայաստանի մի շարք այլ տեղամասերի «քանդակագործ շքազարդի» հազար հինգ հարյուր մատիտանկարները Ա. Ֆեթվաճյանը նվիրաբերեց Հայաստանի ազգային պետական թանգարանին (այսօր՝ ՀԱՊ) [49, էջ 486-488]:

[10] Վիլյամ Լեթաբին «Journal of the Royal Institute of British Architects» ամսագրի համար անգլերեն շարադրեց Ա. Ֆեթվաճյանի ֆրանսերեն մտքերը [55, էջ 585-594]: Նա նաև «Հայկական ճարտարապետությունը» խորագրով ակնարկ գրեց Լոնդոնի «Վիկտորիա և Ալբերտ» թանգարանում Ֆեթվաճյանի ցուցահանդեսի կատալոգի համար [56]: Շարլ Դիլը «Մոնումենտալ արվեստը Հայաստանում» խորագրով առաջաբան գրեց Փարիզի Դեկորատիվ արվեստների թանգարանի ֆեթվաճյանական պատկերահանդեսի կատալոգի համար [54]:

[11] Ֆեթվաճյանի հայալեզու և ֆրանսալեզու բանախոսությունների ձեռագիր նմուշներին և ազդագրերին կարելի է ծանոթանալ ՀԱՊ-ի Հուշաձեռագրային բաժնում [47]:

[12] Մասնագիտական գրականության մեջ որպես այս հոդվածի աղբյուր հիշատակվում է «Մուրճ» հանդեսը [25, էջ 67; ՀԱՊ-ում պահվող այս հոդվածի մեքենագիր տեքստի վերջում նույնպես նշված է «Մուրճ»-ը [35] և այլն]: Սակայն, թիֆլիսյան գրական և հասարակական-քաղաքական այս ամսագրի հրապարակումը դադարեցվել էր դեռևս 1907 թվականին, մինչդեռ հոդվածը հրատարակվել էր 1909-ին: Լ. Ալոյանի ««Մշակ» լրագրի հրապարակախոսությունը 1905-1921 թթ.» գրքի շնորհիվ պարզեցինք այս խնդիրը [2, էջ 129-130]: Շնորհակալություն ենք հայտնում արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Աննա Ասատրյանին՝ այս աղբյուրին մեզ ծանոթացնելու համար:

պատասխանատու գործը: Ողջունելով մրցույթի գաղափարը՝ Վ. Սուրենյանցը ներկայացնում է հայոց սրբավայրի բազմամյա ռեստավրացիոն փորձերին ներգրավվածության իր նախապատմությունը և առաջ է քաշում իր տեսլականը[13]:

Դեռևս 1886 թվականին Մակար Ա Թեղուտցու օրոք սկիզբ առած վերանորոգման գործընթացներին Վ. Սուրենյանցը ստանձնել էր տաճարի ինտերիերի բարեկարգումը[14]: Սակայն Կաթողիկոսի մահով աշխատանքները դադարեցվել էին: Խրիմյան Հայրիկը նույնպես դիմել էր Վ. Սուրենյանցի օգնությանը[15]: Կաթողիկոսին արվեստագետը պատասխանել էր Մոսկվայից՝ ընդարձակ նամակ-զեկուցումով: Տաճարի ներսի վերանորոգմանը ձեռնամուխ լինելուն նա համաձայն էր «բարձրաձայն, հրապարակօրէն ու յայտնի կերպով» գեղարվեստի մեծ կենտրոններում՝ Մյունխեն, Փարիզ, Մոսկվա, Պետերբուրգ ու Թիֆլիս իր նախագծերը ներկայացնելուց և մասնագետների կարծիքը լսելուց հետո [38, էջ 3]: Նրա նամակը անպատասխան էր մնացել:

Վ. Սուրենյանցը զեկուցագիր է ներկայացրել նաև Մատթեոս Բ Իզմիրլյան կաթողիկոսին: Հայաստանի ազգային արխիվում պահվող հենց այդ զեկուցագիրն է նույնությամբ հրատարակվել «Մշակ»-ի վերոնշյալ հոդվածում և տարիներ անց՝ «Էջմիածին» հանդեսում [37, թ. 22-27; 21, էջ 35-39][16]:

Վ. Սուրենյանցը ճարտարապետական հրաշագեղ այդ կոթողի վերանորոգման առաջնային նախապայման է համարում գիտակ և պրոֆեսիոնալ մոտեցումը՝ մանրազնին չափագրությամբ: Այնուհետև նա կենսական է համարում տաճարի հին և նոր, ներքին և արտաքին ձևերի, ոճի և տեխնիկայի առանձնա-

[13] Հոդվածի հրատարակումից հետո՝ 1910-ին, Վ. Սուրենյանցին հրավիրում են մասնակցել հայտարարված մրցույթին: «1910-ին Վ. Սուրենյանցը, ի թիվս ճարտարապետներ Թ. Թորամանյանի, Ա. Ռագոյսկու և Ք. Տեր-Սարգսյանի, արտոնյալ պայմաններով հրավիրվել է մասնակցելու Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման նպատակով հայտարարված մրցույթին (մրցութային հանձնաժողովի նախագահն էր Գ. Բաշինջաղյանը), սակայն ինչ-ինչ պատճառներով մերժել է այդ հրավերը», - գրում է արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Արարատ Աղասյանը [4, էջ 247]: Այս հարցի շուրջ տե՛ս նաև 33, էջ 35-39; 23, էջ 21-25:

[14] Այդ գործի համար նա ընդօրինակել էր տաճարի ներսի որմնանկարները, թվով 130 թերթ, որոնցից պահպանվել են մի քանիսը: Վերանորոգման ընդհանուր նախագիծն իրականացրել էր Թիֆլիսից եկած ճարտարապետ Շտերնը:

[15] Այդ մասին վկայում է նաև նկարիչ Տարագրոսը: Խրիմյան Հայրիկն իրեն ասել էր, որ հույս ուներ «նկարիչ Վարդգես Սուրենյանին հրավիրելու, որպեսզի հայկական ոճով նկարազարդի ամբողջ տաճարի ներսը՝ պլինտուսներից սկսած մինչև գմբեթի թմբուկի ծայրը» [44, էջ 38]:

[16] Արվեստաբան Մանյա Ղազարյանի մենագրությունից տեղեկանում ենք, որ Վ. Սուրենյանցը 1912 թվականին Մոսկվայում Ռուս նկարիչների երկրորդ համագումարում այս թեմայով զեկուցում է կարդացել [25, էջ 67]: ՀԱՊ ՀՁԲ պահվում է ձեռագիր ռուսալեզու պատառիկ, որտեղ շարադրված են Վ. Սուրենյանցի ռեստավրացիոն դրույթները [40]:

հատկությունների անձեռնմխելիությունը[17]: «Պետք է վերաշինութիւնը այնպէս կատարվի, որ ոչ ոք չը հասկանա, որ տաճարին մարդու ձեռք է դիպել», - պնդում է նկարիչը և որպես օրինակ վկայաբերում ժամանակակից միջազգային՝ եվրոպական փորձը, մասնավորապես Փարիզի Սեն Դենի եկեղեցու, Վենետիկի դքսական պալատի և Վալենսիայի կաթողիկեի վերականգնումը [38, էջ 3-4]:

Վ. Սուրենյանցի խորին համոզմամբ՝ անձեռնմխելիության այս սկզբունքը խախտելը սխալ է էթիկական և էսթետիկական պատճառներով: Նախ՝ տաճարը հայ ազգի անցած բազմադարյան պատմության հիշատակարանն է՝ իր ամբողջականության, նույնիսկ ոճական անմիասնականության մեջ: Եվ, ինչպես որ պատմիչը իրավասու չէ պատմության էջերից ջնջել իր համար անցանկալի անունները, այնպես էլ դրա իրավունքը չունի ճարտարապետը: Երկրորդը՝ էսթետիկական կողմն է. տաճարի կառուցման երեք հիմնական փուլերի ընթացքում կանգնեցված բուն տաճարը, զանգակատունը և թանգարանը թեև ոճապես միմյանցից տարբեր են, սակայն համաչափություններով՝ ներդաշնակ: Նա վտանգավոր է համարում այդ համաչափությունների խախտումը:

Ահա այս պատճառներով է, որ Վ. Սուրենյանցը քննադատում է Թիֆլիսից Սբ. Էջմիածին ժամանած ճարտարապետ Ֆ. Շտերնի նախագիծը: Այն «մի օտարական ճարտարապետի յատուկ թերութիւններով էր, ճարտարապետի, որ հայկական ոճը իրան մէջ բաժանել էր իր հաւանած ու չը հաւանած տարերքի, առանց շրջանների ու դարերի խտրութեան: Նրա անհոգ... կարծիքով, ամենալաւը այն է, որ Էջմիածնի տաճարի շէնքը մէկ ընդհանուր ձևի գայ... դրսից Կովկասի սովորական եկեղեցիներին նմանելով և կամ ամենալաւ դէպքում Անիի տասնեմէկերորդ եկեղեցիները յիշեցնելով...», - գրում է Վ. Սուրենյանցը [38, էջ 3][18]:

Գիտականորեն հիմնավորված և համոզիչ վերոնշյալ դրույթները Վ. Սուրենյանցը պարտադիր է համարում Էջմիածնի Մայր տաճարի նորոգման համար հայտարարված մրցութային ծրագրում ներառելու համար՝ «աւերումից ու աղա-

[17] Անձեռնմխելիության այդ սկզբունքն անչափ կարևոր էր և հաստատվել էր Մակար Ա Թեղուտցի կաթողիկոսի կողմից, թեև երբեմն խախտվել [24, էջ 39-40]: «Մշակ»-ի էջերում այն պահպանելու կոչ էր անում նաև Մ. Սարյանը [34, էջ 2]:

[18] Էջմիածնի Մայր տաճարի նորոգմանն առնչվող խնդիրները քննարկվել են «Մշակ»-ի էջերում նաև հետագայում: Մասնավորապես Ալ. Շիրվանզադեն իր հոդվածներից մեկում անդրադառնում է հայկական հնությունների պահպանության կոմիտեի ստեղծման անհրաժեշտությանը և այլոց մեջ բերում Էջմիածնի Մայր տաճարի ռեստավրացիայի տխուր օրինակը [31, էջ 2]: Մ. Սարյանը վկայակոչում է ականատեսի խոսքերը, համաձայն որի վերականգնման արդյունքում վնասվել են թմբուկի վրայի արձանագրությունները [34, էջ 2]: Ծավալվում է բանավեճ մի կողմից՝ Ալ. Շիրվանզադեի, Մ. Սարյանի, Գ. Լևոնյանի և մյուս կողմից՝ ռեստավրացիոն հանձնաժողովի ներկայացուցիչներ Գ. Բաշինջաղյանի և Ա. Ֆեթվաճյանի միջև [7, էջ 3; 15, էջ 2; 9, էջ 2; 6, էջ 3; 48, էջ 2; 16, էջ 1-2]: Խնդիրը սրվում է Էջմիածնի Բարդուղիմեոս եպիսկոպոսի՝ այդ փաստը հավաստող հոդվածով [11, էջ 94]: Բանավեճն ավարտվում է Գ. Բաշինջաղյանի վկայաբերած փորձաքննության եզրակացությամբ [28, էջ 2; 8, էջ 2]: Էջմիածնի վերանորոգության Կենտրոնական մասնաժողովի և Թիֆլիսի մասնաժողովի ճարտարապետ անդամների կազմած արձանագրությունը տես նաև 27, էջ 219-221:

աղումից» փրկելու համար «մեր սրտերի համար թանգագին գեղարուեստական տաճարը, որը չունի իր հասակակից ընկերը ամբողջ աշխարհում» [38, էջ 4]:

Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Դավիթ Քերթմենջյանը բարձր է գնահատում արվեստագետի մոտեցումները: Վ. Սուրենյանցի «արտահայտած տեսակետները միանգամայն համընկնում են շատ ավելի ուշ հասարակության սեփականությունը դարձած վերականգնման կոնվենցիաների սկզբունքների հետ», - գրում է նա և հավելում, որ դրանք «կարևոր ատաղձ ծառայեցին հայկական ռեստավրացիոն պրակտիկայի առաջին քայլերը կողմնորոշելու համար» [45, էջ 54-55]: Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգման Վ. Սուրենյանցի տեսակետը քննել է նաև ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր Վարազդատ Հարությունյանը «Մայր տաճարի պահպանության ուղղությամբ կատարված ջանքեր» հոդվածում [23, էջ 21-22]:

Վ. Սուրենյանցի տեսական ժառանգությունը քննության են առել նաև արվեստաբան Արարատ Աղասյանը, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յակով Խաչիկյանը և արվեստաբան Մանյա Ղազարյանը [4, էջ 405-417; 18, էջ 22-38; 25, էջ 63-69]: Վ. Սուրենյանցի առանձին մտքերն իրենց մնայուն տեղն են գտել «Արվեստի վարպետները արվեստի մասին»՝ ԽՍՀՄ ժողովուրդների արվեստին նվիրված մոսկովյան և «Հայ նկարիչները արվեստի մասին» երևանյան բազմահատորյակներում [51, էջ 553-554; 50, էջ 39, 41-43]:

Եզրակացություն

Վ. Սուրենյանցի տեսական և քննադատական ակնարկները՝ «Մշակ»-ի էջերում, ազգօգուտ էին և արդիական՝ առաջատար եվրոպական մտքին համաքայլ: Տեղեկատվական կարևոր արժեք են ներկայացնում «Մշակ»-ի լրագիրների՝ Վ. Սուրենյանցի կյանքին և ստեղծագործությանը նվիրված հոդվածները:

Նշանակալից էր «Մշակ»-ի դերը հայ ազգի հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում: Այն անհրաժեշտ հարթակ էր տրամադրում մեր ուսյալ հայրենակիցներին՝ հայ արվեստին առնչվող արդի հիմնախնդիրները բարձրաձայնելու, լուծումներ առաջարկելու, ազգայինը արվեստում հասկանալու և արդիական այլ մտքերի, գաղափարների ու տեղեկատվության փոխանակման համար:

Գրականություն

1. Ա. Ֆեթվաճյանի դասախոսությունների ձեռագիր նմուշներ և ազդագրեր, ՀԱՊ ՀՁԲ, ֆ. 144:
2. Ալոյան Լ. «Մշակ» լրագրի հրապարակախոսությունը 1905-1921 թթ. Երևան, «Ոսկան Երևանցի», 2003, 150 էջ:
3. Աղասյան Ա. Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում. Երևան, «Ոսկան Երևանցի», 2009, 192 էջ, նկար:
4. Աղասյան Ա. Վարդգես Սուրենյանց (1860-1921), Նշանավոր ճեմարանականներ, պրակ Բ. Էջմիածին, «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին», 2009, էջ 405-417:
5. Աղասյան Ա. Վարդգես Սուրենյանցի մի անհայտ կտավի մասին, Վարդգես Սուրենյանց - 150, Հոբելյանական գիտաժողով՝ նվիրված Վարդգես Սուրենյանցի ծննդյան

150-ամյակին (16 նոյեմբերի, 2010): Զեկուցումների ժողովածու. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, էջ 77-83:

6. Բաշինջաղեան Գ. Այս էլ Պ. Լեւոնեանի նամակի առիթով, «Մշակ». Թիֆլիս, 1914, փետրվարի 9, № 30, էջ 3:

7. Բաշինջաղեան Գ. Անտեղի յարձակումն, «Մշակ». Թիֆլիս, 1914, հունվարի 30, № 21, էջ 3:

8. Բաշինջաղեան Գ. Էջմիածնի տաճարի վերանորոգութեան առիթով ծագած վէճի մասին, «Մշակ», Թիֆլիս, 1914, փետրվարի 27, № 43, էջ 2:

9. Բաշինջաղեան Գ.Պ. Սարեանի նամակի առիթով, «Մշակ». Թիֆլիս, 1914, փետրվարի 5, № 26, էջ 2:

10. Բաշինջաղեան Ս. Նամակ Բագուից ապրիլի 26-ին, «Մշակ». Թիֆլիս, 1901, մայիսի 2, № 93, էջ 2:

11. Բարդուղիմէոս եպիսկոպոս, Նամակներ խմբագրութեան: Էջմիածին, փետր. 1-ին, «Հովիտ». Թիֆլիս, 1914, № 6, էջ 94:

12. Թորամանյան Թ. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության: Աշխատությունների ժողովածու. Երևան, «Արմֆան» հրատ., 1942, 403 էջ:

13. Թորամանյան Թ. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության: Աշխատությունների երկրորդ ժողովածու. Երևան, «Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի» հրատ., 1948, 307 էջ:

14. Թօրամանեան Թ. Նորագոյն կարծիքներ՝ հայ ճարտարապետութեան մասին, «Անահիտ». Փարիզ, 1911, սեպտեմբեր-դեկտեմբեր, № 9-12, էջ 197-220:

15. Լևոնեան Գ. Դարձեալ երկու խոսք Էջմիածնի տաճարի վերանորոգութեան առիթով, «Մշակ». Թիֆլիս, 1914, փետրվարի 4, № 25, էջ 2:

16. Լևոնեան Գ. Թէ ամենքի համար եւ թէ պ. Բաշինջաղեանի, «Մշակ». Թիֆլիս, 1914, փետրվարի 20, № 37, էջ 1-2:

17. Խալաթեանց Գ. Նամակ Մոսկվայից մայիսի 1-ին, «Մշակ». Թիֆլիս, 1879, մայիսի 10 (22), № 70, էջ 1-2:

18. Խաչիկյան Յ. Վարդգես Սուրենյանցի արվեստաբանական և գեղագիտական կողմնորոշումները ժամանակի հայկական տեսական մտքի համատեքստում, Վարդգես Սուրենյանց - 150, Հոբելյանական գիտաժողով՝ նվիրված Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակին (16 նոյեմբերի, 2010): Զեկուցումների ժողովածու. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, էջ 22-38:

19. Ծատուրեան Ա. Նամակներ Մոսկվայից: Պուշկինի տօնը գրականութեան մէջ, «Մշակ» Թիֆլիս, 1899, 18 մայիսի, № 88, էջ 1-2:

20. Հ.Ա. Մի հետաքրքրական հարց, «Մշակ». Թիֆլիս, 1899, հոկտեմբերի 8, № 187, էջ 2:

21. Հարությունյան Գ. Նկարիչ Վարդգես Սուրենյանցի «Յաղագս վերանորոգութեան տաճարին սբ. Էջմիածնայ» զեկուցագիրը, «Էջմիածին» հանդես. Էջմիածին, 1947, № Ա-Բ, էջ 35-39:

22. Հարությունյան Վ. Թորոս Թորամանյանը և հայ ճարտարապետության գիտական ուսումնասիրությունը (ծննդյան 90 և մահվան 20-ամյակի առթիվ), «ՀՍՍՌ ԳԱ հասարակական գիտությունների». Երևան, № 5, 1954, էջ 61-77:

23. Հարությունյան Վ. Մայր տաճարի պահպանության ուղղությամբ կատարված ջանքեր, «Էջմիածին». Էջմիածին, 1976, № Է, էջ 21-25:

24. Հարությունյան Վ. Մայր տաճարի պահպանության ուղղությամբ կատարված ջանքեր, «Էջմիածին». Էջմիածին, 1976, № Զ, էջ 38-44:

25. Ղազարյան Մ. Վարդգես Սուրենյանց. Երևան, «Հայպետհրատ», 1960, 97 էջ պատկ.:

26. Ղաֆադարյան Կ. Թորոս Թորամանյան, «Պատմա-բանասիրական հանդես».

Երևան, 1964, հատոր 1, էջ 15-24:

27. Մայր տաճար: Արձանագրություն, «Արարատ». Էջմիածին, 1914, մարտ, համար Գ, էջ 219-221:

28. Մեղադրանքն անհիմն է, «Մշակ». Թիֆլիս, 1914, փետրվարի 25, № 41, էջ 2:

29. Յ.Զ. [Հարություն Զմշկյան], Նկարիչ Վարդգէս Սուրէնեանի նոր պատկերը, «Արձագանք». Թիֆլիս, 1897, փետրվարի 9 (21), № 16:

30. Ներքին լուրեր, «Մշակ». Թիֆլիս, 1890, մարտի 1, № 24, էջ 2:

31. Շիրվանզադէ, Նամակներ Մոսկվայից, «Մշակ». Թիֆլիս, 1914, հունվարի 26, № 18, էջ 2:

32. Զուգասզեան Լ. Արշակ Ֆեթվաճեան. Երեւան, «Փրինթինֆո», 2011, 188 էջ, 123 նկ:

33. Պապուխյան Ն. Թորոս Թորամանյան: Կյանքն ու գործը. Երևան, «Լուսակն» հրատ., 2005, 108 էջ:

34. Սարեան Մ. Մի բացատրութիւն, «Մշակ». Թիֆլիս, 1914, փետրվարի 1, № 23, էջ 2:

35. Սուրենյան Վ. Դարձյալ Էջմիածնի վերաշինության մասին, ՀԱՊ ՀՁԲ, ֆ. 128, ինվ. № 3128:

36. Սուրենյանց Վ. Գեղարուեստի նորագոյն հոսանքները եւ հայկական ճարտարապետութիւնը, «Մշակ». Թիֆլիս, 1903, օգոստոսի 15, № 176, էջ 1-2:

37. Սուրենյանց Վ., Սբ. Էջմիածնա վերաշինության խնդիրը, զեկուցագիր, անթվակիր, ՀԱԱ, ֆոնդ 57, ցուցակ 1, գործ 483, թ. 22-27 (6 թերթ):

38. Սուրէնեան Վ. Դարձեալ Էջմիածնի վերաշինութեան մասին, «Մշակ». Թիֆլիս, 1909, ապրիլի 29, № 88, էջ 3-4:

39. Սուրէնեանց Վ. Նամակ խմբագրութեան, «Մշակ». Թիֆլիս, 1899, 28 հոկտեմբերի, № 200, էջ 2-3:

40. Վ. Սուրենյանցի զեկուցագրից Էջմիածնի տաճարի նորոգման մասին (ռուսերեն), ՀԱՊ ՀՁԲ, ֆ. 128, ինվ. № 4415

41. Վ. Սուրենյանցի նամակը Ալ. Ծատուրյանին. Բաքու, մայիսի 1, 1941, ՀԱՊ ՀՇՁ, ֆ. 128, ինվ. № 3099:

42. Վ. Սուրենյանցի նամակը Ալ. Ծատուրյանին, հուլիսի 15, 1903, ՀԱՊ ՀՇՁ, ֆ. 128, ինվ. № 3103:

43. Վարդգես Սուրենյանց (1860-1921), Կենսամատենագիտություն (Կազմ. Ա. Ադամյան; Առաջաբան՝ Մ. Միքայելյան, Բ. Հովակիմյան). Երևան, «Գիրք», 2018, 180 էջ:

44. Տարագրոս, Մի քանի խոսք Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգության մասին, «Էջմիածին». Էջմիածին, 1946, հունիս-հուլիս, Զ-Է, էջ 37-40:

45. Քերթմենջյան Դ. Ճարտարապետությունը Վարդգես Սուրենյանցի ստեղծագործական ժառանգության մեջ, Վարդգես Սուրենյանց - 150, Հոբելյանական գիտաժողով՝ նվիրված Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակին (16 նոյեմբերի, 2010): Զեկուցումների ժողովածու. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2011, էջ 47-55:

46. Ֆեթվաճեան Ա. Գեղարուեստը հայերի մէջ, «Մշակ». Թիֆլիս, 1903, հուլիսի 4, № 143, էջ 1-2:

47. Ֆեթվաճյանի հայալեզու և ֆրանսալեզու բանախոսությունների ձեռագիր նմուշներ և ազդագրեր, ՀԱՊ ՀՁԲ, ֆ. 144:

48. Ֆէթվաճեան Ա. Էջմիածնի Մայր տաճարի վերանորոգութեան մասնախմբի գործունէութեան մասին, «Մշակ». Թիֆլիս, 1914, փետրվարի 12, № 32, էջ 2:

49. Ֆէթվաճեան Ա. Իմ նուիրաբերութիւնները Հայ ազգին, «Հայաստանի կոչնակ», Նիւ Եորք, 1947, մայիսի 24, № 21, էջ 486-488:

50. Армянские художники об искусстве. Ереван, «Б.и.», 2004, 346 с.

51. Мастера искусства об искусстве, том 7. Искусство народов СССР XIX-XX вв.

Москва, «Искусство», 1970, 752 с.

52. Стржиговский Й. Архитектура армян и Европа, том I. Введение. Первая книга: Памятники. Ереван, изд. «Гитутюн» НАН РА, 2011, 364 с. с илл.

53. Стржиговский Й. Архитектура армян и Европа, том I. Книга вторая: Сущность. Ереван, изд. «Гитутюн» НАН РА, 2018, 399 с. с илл.

54. Diehl Ch. Préface, L'art monumental en Arménie. Aquarelles et relevés "ornements" d'après les édifices du VIe au XIIIe siècle. Types ethnographiques par A. Fetvadjian. Avril, 1920. Paris, p. 3-5, ՀԱՊ ՀԶԲ, ֆ. 144, ինվ. № 13031.

55. Fetvadjian A. An outline history of Armenian architecture, Journal of the Royal Institute of British Architects. London, 23 September 1922, Vol. 29, № 19, p. 585-594.

56. Lethaby W.R. Armenian architecture, Victoria and Albert Museum. Armenian architecture from the 6th to the 13th century. Catalogue of an exhibition of drawings of architectural details and ornament by A. Fetvadjian, 1921, p. 1-4, ՀԱՊ ՀԶԲ, ֆ. 144, ինվ. № 13034.

57. Strzygowski J. Die Baukunst der Armenier und Europa. Wien, Kunstverlag Anton Schroll & CO.G.M./B.H., 1918, Band I, 1-455 S., band II, 459-887 S.

References

1. A. Fetvatchyani dasaxosutyunneri dzeragir nmushner ev azdagrer, HAP HDB, f. 144.

2. Aloyan L. "Mshak" Iragri hraparakaxosutyuny 1905-1921 tt. Yerevan, "Voskan Yerevanci", 2003, 150 ej.

3. Aghasyan A. Hay kerparvesti zargacman ughinery XIX-XX darerum. Yerevan, "Voskan Yerevannci», 2009, 192 ej, nkar.

4. Aghasyan A. Vardges Surenyanc (1860-1921), Nshanavor chemaranakanner, prak B. Ejmiacin, "Mayr Ator Surb Ejmiacin", 2009, ej. 405-417.

5. Aghasyan A. Vardges Surenyanci mi anhayt ktavi masin, Vardges Surenyanc - 150, Hobelyanakan gitajhoghov nvirvac Vardges Surenyanci cnndyan 150-amyakin (16 noyemberi, 2010): Zekucumneri jhoghovacu. Yerevan, HH GAA "Gitutyun" hrat., 2011, ej 77-83.

6. Bashinjaghean G. Ays el P. Levoneani namaki aritov, "Mshak". Tiflis, 1914, petrvari 9, № 30, ej 3.

7. Bashinjaghean G. Anteghi yardakumn, "Mshak". Tiflis, 1914, hunvari 30, № 21, ej 3.

8. Bashinjaghean G. Ejmiacni tachari veranorogutean aritov cagac vechi masin, "Mshak", Tiflis, 1914, petrvari 27, № 43, ej 2.

9. Bashinjaghean G.P. Sareani namaki aritov, "Mshak". Tiflis, 1914, petrvari 5, № 26, ej 2.

10. Bashinjaghean S. Namak Baguic aprili 26-in, "Mshak". Tiflis, 1901, mayisi 2, № 93, ej 2.

11. Bardughimeos episkopos, Namakner xmbagrutean: Ejmiacin, petr. 1-in, "Hovit". Tiflis, 1914, № 6, ej 94.

12. Toramanyan T. Nyuter haykakan chartarapetutyan patmutyan: Ashxatutyunneri jhoghovacu. Yerevan, "Armfan" hrat., 1942, 403 ej.

13. Toramanyan T. Nyuter haykakan chartarapetutyan patmutyan: Ashxatutyunneri erkrord jhoghovacu. Yerevan, "Haykakan SSR Gitutyunneri akademiayi" hrat., 1948, 307 ej.

14. Toramanean T. Noragoyn karciqner hay chartarapetutean masin, "Anahit". Pariz, 1911, september-dektember, № 9-12, ej 197-220.

15. Levonean G. Dardeal erku xosq Ejmiacni tachari veranorogutean aritov, "Mshak". Tiflis, 1914, petrvari 4, № 25, ej 2.

16. Levonean G. Te amenqi hamar ev te p. Bashinjagheani, "Mshak". Tiflis, 1914, petrvari 20, № 37, ej 1-2.

17. Xalateanc G. Namak Moskvayic mayisi 1-in, “Mshak”. Tiflis, 1879, mayisi 10 (22), № 70, ej 1-2.

18. Xachikyan Y. Vardges Surenyanci arvestabanakan ev geghagitakan koghmnoroshumnery jhamanaki haykakan tesakan mtqi hamateqstum, Vardges Surenyanc - 150, Hobelyanakan gitajhoghov nvirvac Vardges Surenyanci cnndyan 150-amyakin (16 noyemberi, 2010): Zekucumneri jhoghovacu. Yerevan, HH GAA “Gitutyun” hrat., 2011, ej 22-38.

19. Chaturean A. Namakner Moskvayic: Pushkini tony grakanutean mej, “Mshak” Tiflis, 1899, 18 mayisi, № 88, ej 1-2.

20. H.A. Mi hetaqrqakan harc, “Mshak”. Tiflis, 1899, hoktemberi 8, N 187, ej 2.

21. Harutyunyan G. Nkarich Vardges Surenyanci “Yaghags veranorogutean tacharin sb. Ejmiacnay” zekucagiry, “Ejmiacin” handes. Ejmiacin, 1947, № A-B, ej 35-39.

22. Harutyunyan V. Toros Toramanyany ev hay chartarapetutyan gitakan usumnasirutyuny (cnndyan 90 ev mahvan 20-amyaki artiv), “HSSR GA hasarakakan gitutyunneri”. Yerevan, № 5, 1954, ej 61-77.

23. Harutyunyan V. Mayr tachari pahpanutyan ughghutyamb katarvac janqer, “Ejmiacin”. Ejmiacin, 1976, № E, ej 21-25.

24. Harutyunyan V. Mayr tachari pahpanutyan ughghutyamb katarvac janqer, “Ejmiacin”. Ejmiacin, 1976, № Z, ej 38-44.

25. Ghazaryan M. Vardges Surenyanc. Yerevan, “Haypethrat», 1960, 97 ej patk.

26. Ghafadaryan K. Toros Toramanyan, “Patma-banasirakan handes”. Yerevan, 1964, hator 1, ej 15-24.

27. Mayr tachar: Ardanagrutyun, “Ararat”. Ejmiacin, 1914, mart, hamar G, ej 219-221.

28. Meghadranqn anhimn e, “Mshak”. Tiflis, 1914, petrvari 25, № 41, ej 2.

29. Y.Ch. [Harutyun Chmshkyan], Nkarich Vardges Sureneani nor patkery, “Ardaganq”. Tiflis, 1897, petrvari 9 (21), № 16.

30. Nerqin lurer, “Mshak”. Tiflis, 1890, marti 1, № 24, ej 2.

31. Shirvanzade, Namakner Moskvayic, “Mshak”. Tiflis, 1914, hunvari 26, № 18, ej 2.

32. Chugaszean L. Arshak Fetvatchean. Yerevan, “Printinfo”, 2011, 188 ej, 123 nk.

33. Papuxyan N. Toros Toramanyan: Kyanqn ev gorcy. Yerevan, “Lusakn” hrat., 2005, 108 ej.

34. Sarean M. Mi bacatrutiun, “Mshak”. Tiflis, 1914, petrvari 1, № 23, ej 2.

35. Surenyan V. Dardyal Ejmiacni verashinutyan masin, HAP HDB, f. 128, inv. № 3128.

36. Surenyanc V. Gegharuesti noragoyn hosanqnery ev haykakan chartarapetutiuny, “Mshak”. Tiflis, 1903, ogostosi 15, № 176, ej 1-2.

37. Surenyanc V. Sb. Ejmiacna verashinutyan xndiry, zekucagir, antvakir, HAA, fond 57, cucak 1, gorc 483, t. 22-27 (6 tert).

38. Surenean V. Dardeal Ejmiacni verashinutean masin, “Mshak”. Tiflis, 1909, aprili 29, № 88, ej 3-4.

39. Sureneanc V. Namak xmbagrutean, “Mshak”. Tiflis, 1899, 28 hoktemberi, № 200, ej 2-3.

40. V. Surenyanci zekucagric Ejmiacni tachari norogman masin (ruseren), HAP HDB, f. 128, inv. № 4415.

41. V. Surenyanci namaky Al. Caturyanin. Baqu, mayisi 1, 1941, HAP HShD, f. 128, inv. № 3099:

42. V. Surenyanci namaky Al. Caturyanin, hulisi 15, 1903, HAP HShD, f. 128, inv. № 3103.

43. Vardges Surenyanc (1860-1921), Kensamatenagitutyun (Kazm. A. Adamyan; Arajaban M. Miqayelyan, B. Hovakimyan). Yerevan, “Girq”, 2018, 180 ej.

44. Taragros, Mi qani xosq Ejmiacni Mayr tachari veranorogutyan masin, “Ejmiacin”. Ejmiacin, 1946, hunis-hulis, Z-E, ej 37-40.

45. Qertmenjyan D. Chartarapetutyuny Vardges Surenyanci steghcagorcakan jharan-

gutyan mej, Vardges Surenyanc - 150, Hobelyanakan gitajhoghov nvirvac Vardges Surenyanci cnndyan 150-amyakin (16 noyemberi, 2010): Zekucumneri jhoghovacu. Yerevan, HH GAA "Gitutyun" hrat., 2011, ej 47-55.

46. Fetvachean A. Gegharvesty hayeri mej, "Mshak". Tiflis, 1903, hulisi 4, № 143, ej 1-2.

47. Fetvachyani hayalezu ev fransalezu banaxosutyunneri deragir nmushner ev azdagrer, HAP HDB, f. 144.

48. Fetvatwean A. Ejmiacni Mayr tachari veranorogutean masnaxmbi gorcuneutean masin, "Mshak". Tiflis, 1914, petrvari 12, № 32, ej 2.

49. Fetvatchean A. Im nuiraberutiunnery Hay azgin, "Hayastani kochnak", Niw Eorq, 1947, mayisi 24, № 21, ej 486-488.

50. Armjanskie hudozhniki ob iskusstve. Yerevan, "B.i.", 2004, 346 s.

51. Mastera iskusstva ob iskusstve, tom 7. Iskusstvo narodov SSSR XIX-XX vv. Moscow, "Iskusstvo", 1970, 752 s.

52. Strzhigovskij J. Arhitektura armjan i Evropa, tom I. Vvedenie. Pervaja kniga: Pamjatniki. Yerevan, izd. "Gitutjun" NAN RA, 2011, 364 s. s ill.

53. Strzhigovskij J. Arhitektura armjan i Evropa, tom I. Kniga vtoraja: Sushhnost. Yerevan, izd. "Gitutjun" NAN RA, 2018, 399 s. s ill.

ВАРДГЕС СУРЕНЯНЦ И «МШАК»[19]

МАРГАРИТА КАМАЛЯН*

Для цитирования: Камалян, Маргарита. "Вардгес Суренянц и «Мшак»". *Искусствоведческий журнал,* N 1 (2024): 154-168. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-154

Автор анализирует статьи известного армянского художника, теоретика, переводчика и педагога Вардгеса Суренянца в газете «Мшак». В них В. Суренянц настаивал на самобытности национального элемента в армянской архитектуре, призывал к профессиональности в его использовании при строительстве армянской церкви в Баку, обозначал основополагающие принципы реставрации Эчмиадзинского кафедрального собора.

Безусловную информативную ценность представляют помещенные в «Мшаке» статьи, посвященные жизни и творчеству самого В. Суренянца. В частности, в исследовании особое внимание уделяется вышедшей в свет в 1901 году уникальной статье, освещающей единственную прижизненную выставку художника.

Теоретические и критические очерки В. Суренянца на страницах «Мшака» были актуальны, национально-ориентированны, соответствовали уровню передовой европейской мысли своего времени.

[19] Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА в рамках научного проекта № 21T-6E077.

* Ученый секретарь Института искусств НАН РА, кандидат искусствоведения, margaritakamalyan@gmail.com, статья представлена 10.01.2024, рецензирована 01.04.2024, принята к публикации 03.06.2024.

Роль газеты в общественно-политической и культурной жизни армянского народа существенна. Издание служило платформой для публикации статей, в которых наши высокообразованные соотечественники освещали современные им проблемы, касающиеся армянской культуры, предлагали пути их решения, обсуждали такое понятие, как, к примеру, «национальное в искусстве», обменивались идеями, информацией, мыслями на различные злободневные темы.

Ключевые слова: Вардгес Суренянц, газета «Мшак», национальная самобытность, Эчмиадзинский кафедральный собор, реставрационные принципы, художественная критика, персональная выставка.

VARDGES SURENYANTS AND "MSHAK"[20]

MARGARITA KAMALYAN[*]

For citation: Kamalyan, Margarita. "Vardges Surenyants and "Mshak"", *Journal of Art Studies,* N 1 (2024): 154-168. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-154

The author analyzes the articles of the prominent Armenian artist, theorist, translator, and pedagogue Vardges Surenyants in the newspaper "Mshak". In them, V. Surenyants insisted on the originality of the national element in Armenian architecture, called for professionalism in its use in constructing the Armenian church in Baku, and outlined the fundamental principles of restoring St. Ejmiatzin Cathedral.

The articles on V. Surenyants's life and career, placed in "Mshak", are of high informative value. The study pays special attention to the unique article, published in 1901 and dedicated to the artist's only lifetime exhibition.

V. Surenyants's own theoretical and critical essays on the pages of "Mshak" were actual, nation-oriented, and in line with the advanced European thought of the time.

The newspaper played an essential part in the socio-political and cultural life of the Armenian people. The edition provided platform for publication of articles, in which our highly educated compatriots elucidated the problems contemporary Armenian culture encountered and proposed ways to solve them, reflected on such notions like, for instance, "the national in art", exchanged ideas, information, and thoughts on various topical issues.

***Key words*:** Vardges Surenyants, "Mshak" newspaper, national identity, St. Ejmiatzin Cathedral, restoration principles, art criticism, personal exhibition.

---

[20] The work was supported by the Science Committee of RA, in the frames of the research project № 21T-6E077.

[*] Scientific secretary of NAS RA Institute of Arts, Doctor of Arts, margaritakamalyan@gmail.com.
The article was submitted on 10.01.2024, reviewed on 10.04.2024, accepted for publication on 03.06.2024.